

ՄԵՂԱԿԱՐԻ ԴԱՐՁԲ.

Պատկ. ԺԹ. 1—10:

Խւրաքանչիւր մարդ աւելի կամ նուազ շափով ենաթակայ է իր նմանների արձակած դատավճռին։ Այդ դատավճռից է կախուած որոշ շափով նրա կեանքի ձեակերպութիւնը։ Եթէ արար աշխարհ ճանաչում է մեղ իբրև վատ, խոյս է տալիս մեր ընկերութիւնից՝ այդ դէմքում մենք ինչքան էլ աշխատենք յառաջագիմել, մեր ճիգերը խեղդամահ կը լինին, որովհետեւ այն միջավայրը, որտեղ ապրում ենք, ամէն կերպ խափանառիթ է հանդիսանում մեր յաջողութեան և յառաջագիմութեան։

Խւրաքանչիւր մարդու աշխարհում ունեցած կոչումը կարող է լինել նրա համար խթան զարգացնելու նրա ընառութիւնը, և կամ մի բեռն, որ իր ծանրութեան ներքոյ գետին կը գլորէ նրան։ Ով վայելում է ջանառէր և պատուաւոր մարդու համբաւ, համարուսում է ճշմարտասէր և ազնիւ, ամէն կերպ պէտք է աշխատէ, որ արդարացնէ հասարակաց կարծիքը, որ իր կեանքը համաձայն լինի հասարակութեան տուած այդ դատավճռին։ Նա պէտք է ամաչէ, տեսնելով որ գեռ չի հասել ընաւորութեան այն քարձրութեան, որը իր կոչումն է պահանջում իրանից։

Դրան հակառակ՝ ով ուրիշների աչքում չունի ոչ մի արժանիք և համարուսում է ընաւորութիւնից զուրկ մէկը, այդպիսին իր մէջ չի գտնում ոչ մի մզում կռուելու այն մեղքերի դէմ, որ իր վերայ նկատում են ուրիշները. այդպիսին չի ամաչիլ, որ ինքն այն է դեռ, ինչ որ վազուց է եղել մարդկանց կարծիքով։ Խոկ անթիւ անհամար սրտեր, որոնց վշտերի պատմութիւնը սարսուռ է ազդում մարդուն և որոնք թէւ շարունակ կռուում են բարու համար, բայց ենթակայ լինելով իրանց նմանների անողոք դատավճռին՝ յետ են մղուում միշտ և խեղդուում վատահամբաւ

առթեան ճահճում, Աստծուն են միայն յայտնիք Ով զըժարախոտթիւն է ունեցել պատկանելու մի վատանուն ընտանիքի, չի ստացել ոչ կրթութիւն, ոչ խնամք՝ դանուել է միշտ արհամարհանիքի տակ, այդպիսին ամէն տեղ անվատահութեան կը հանդիպի: Թող նա ճշմարտութիւն խօսի, մարդիկ կընդունեն այդ իբրև կեղծիք, թող նա մի իրաւացի գործ կատարէ, ուրիշներն այդ կանուանեն եսասմիրութիւն, փառամորութիւն: Ավքեր իրանց արդար են համարում, խոյս կը տան նրա ընկերութիւնից, և այդպիսով կը մատնեն նրան մեղաւորների ձեռքը: Ի զնուր է գործում նա լողալ հոսանքի գէմ: Ընկերների չար օրինակը, նրանց կորստարեր դատավճիռը կը բժայնէ նրա խմլճը:—Յուսահատած կը գնայ նա մեղաւորների ճանապարհով, քանի որ արդարութեան ուղին փակ է մնում նրա առաջ:

Մի այսպիսի ճակատագիր ունեցել էր Զաքէսոսը: Նա մաքսապետ էր և ծառայում էր Հռոմայեցիներին: Նրա պաշտօնն էր իր հայրենիքի թշնամիների օգտին հաւաքել այնքան ատելի գարծած հարկը: բնական է որ այդ բոլորը նրա ազգակիցների սրտում առաջ բերէր միայն ատելութեան և զգուանքի զգացում, և պատճառ լինէր, որ նրա հետ յարաբերութեան ամէն կապ խցէին: Նա, ընկերով հեթանոսների ու մեղաւորների ընկերութեան մէջ, եղել էր իբրև նրանցից մէկը: Եւ երբ կամենում էր նա փրկել իր անձը չարերի ընկերութիւնից, մեղապարտ ընթացքից և մեղապարտ յարաբերութիւններից, նրա գործ դրած այժը ընդհարուում էր իր ազգակիցների նախապաշտմունքի հետ: Զկար մէկը, որ օգնութեան ձեռք պորդէր նրան: Բարեպաշտների ընկերութիւնից հալածուած՝ նա մնում էր մեղաւորների ընկեր, նրանց մեղքերի ընկերը: Յիսուս ըմբռնում է այս մեղաւոր և մեղատանջ սրտի ճիգն ու տենչը: Նա արհամարհուած մաքսապետի հետ վարուում է իբրև իրան հաւասար մէկի հետ: Դրանով պատռում է նրան այն ընդհանուր արհամարհանիքից, որի պատճառով կորցրել էր Զաքէսոս իր բարի լինելու և բարիք

անելու տրամադրութիւնը։ Նրանք, որոնք արհամարհում են նրան, մեծարում են Յիսուսին։ Ի հարկէ նրանք կը կամ մենային զայրանալ և Յիսուսի վերայ, բայց ի զուր կլինէր, քանի որ նրա վերայ մեղքի մի նշոյլ անգամ գտնել չէին կարող։ Արդ, երբ ինքը Փրկիչն է յարդում Զաքէսոսին, ել ով կարող է արհամարհել նրան։ ինքը Զաքէսոսն այլևս պատճառ չի տեսնում արհամարհելու իրան։ Սուրբ և արդար Աստուածորդու սէրը վերադարձնում է նրան այն ոյժը, որով կարողանում է կրկին յարդել ինքն իրան։ Նա նրան զօրութիւն է տալիս՝ մաքառելու իր մեղաւոր ընկերների հայեացքների դէմ, իր մինչեւ այսօր վարած կեանքի սկզբունքների դէմ՝ զգում է զօրութիւն նոր մարդ լինելու։ Մէջ բերենք Զաքէսոսի իր խօսքերը, որոնք շատ բնորոշ կերպով ցոյց են տալիս նրա կրած փոփոխութիւնը։ «Ճէր, ահա զկէս ընչից խմոց տաց աղքատաց, և եթէ զոք զրկեցի, հատուցից չորեքին»։ Մեղաւորն այսպիսով խզում է կապը իր մութ անցեալի հետ՝ ինքնաւկամ քաւելով իր գործած անարդարութիւնները։

Յիսուսի սէրը, այն մաքւոր և զօրաւոր սէրը, որ Աստուծուն է միայն յատուկ, մեղքով թշուառացած հոգին ների համար մի սքանչելի ոյժ է, որ նորոգում, կերպարանափոխ է անում մեղապարտ կամքը։ Յիսուսի աշակերտներն ինչքան աւելի անջինջ և վառ պահեն իրանց կեանք քում երկնաւոր Վարդապետի պատկերը, այնքան աւելի մասնակից կը լինեն այդ ոյժին։ Մեղաւորն երբ արժանանում է մի սիրոյ, որը չի բղխում դէպի իր մեղքերը ցոյց տուած թաքուն համակրանքից, այլ այնպիսի անձնաւորութիւնից, որին յարդում են բոլոր մարդիկ, և որ իբրև կենդանի օրէնք զարթեցնում է իր, մեղաւորի, խիղճը՝ այն ժամանակ նա ինքն իրան աւելի բարձրացած է զգում քան առաջ և աղատուած այն ճնշումից, որով իր մեղաւոր անցեալն ու իր նմանների արհամարհանքը ծանրանում էին իր վերայ։ Այսօրինակ սէրը կընդունի նա վստահութեամբ։ Խոկ վստահութիւնը դէպի այն մարդը, որի աշքում ինքն իրան լաւ է զգում, կը ներշնչէ արու-

թիւն և ոյժ լաւ լինելու։ Ով իր կեանքով սրբում է մեղքը,
կարող է և իր սիրով փրկել մեղաւորին։

(Christliche Welt, 1902, Թարգմ. Յ. սկ.)



ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ

Գլուխ Բ.

ՓԻԼԻՊՊՈՍ ԿԱԹՈՒՂԻԿԱՑ ԵՒ ԲՈՐԵՆՈՐՈԴՉԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ

1635—1655.

Մավաես կամուղիկոսը մահուան մահճում, զիջանեւ-
լով իր շուրջը հաւաքուած միաբանների և բազմաթիւ այլ
վարդապետների թախանձանքինց յայտնում է իր ցանկու-
թիւնը՝ ընտրել իրեն յաջորդ Փիլիպպոս եպիսկոպոս Հաղբա-
կեղուն։ Մեծ հայրապետի այս ցանկութիւնը դլուխ է զա-
մո մի տարի յետոյ. Հայ ազգի հեռաւոր անդամները, յար-
գելով իրենց սիրելի հայրապետի կամքը, թղթերով ընտրում
են Փիլիպպոսին, որ և օծուում է 1633 թ., յունուար 13-ին։

Փիլիպպոսը Հաղբակ գաւառոի երնկան զիւղից էր. 14
տարեկան Հառակում գնում է Մեծանապատ, բայց այս-
տեղ նորան չեն ընդունում փոքր լինելուն պատճառով. 8
ամիս նու վանքից զուրս է մնում, մինչեւ որ Մովսէս վար-
դապետը արեմուաքից գալով՝ Սարդիս եպիսկոպոսի յանձ-
նորարութեամբ վերցնում է իւր մօտ իբր աշակերտ։ Ապա
№ 1488 Յայ մատուրքի յիշատակարանի համաձայն, և մուտ-
իները ծանր կրօնից և կացեալ ի ճգունս մինչեւ յարրունս
հասալի և ի տիս երիտասարդութեան, և այսուշեակ բոնա-
բարեալ ի վարդապետին իւրմ, ի Մովսէս մեծե, առնու-